№ 66 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 26 1902 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 26 № 66

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղի 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական ինքնագործունէութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնագիտական ընկերութեան նիստը. Փոթորկից յետոյ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից։ Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պարսկաստանից.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ, երբ Ռուսաստանի մի որ և է գաւառում գումարվում է արդիւնաբերողների մի որ և է համագումար ժողով, նրա վերջնական եզրակացութիւնները և որոշումները այն բանին են յանգում, որ ինքնավարութիւնը պէտք է նպաստ տայ, պէտք է հիմնէ այս կամ այն հաստատութիւնը և առհասարակ պէտք է գլխաւոր ղեկավարողը և կազմակերպողը լինի այդ արդիւնագործութեան վերաբերութեամբ։

Սակայն այն ժողովը, որ տեղի ունեցաւ վերջերս Պետերբուրգում, այն է տնայնագործական ժողովը, որի մասին մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, ցանկացաւ մի մխիթարական բացառութիւն կազմել և իր որոշումների մէջ այնքան չը շեշտեց և չը պնդեց կառավարչական ներգործական դերի, որքան տեղական հիմնարկութիւնների և տեղական գործողների ինքնուրոյն և փոխադարձ գործունէութեան վրա։ Ժողովը էական նշանակութիւն տուեց զեմստվօի եւ տեղական կօմիտէտների գործունէութեան, համարելով դրան արմատական և էական։

Տալով այդքան մեծ նշանակութիւն տեղական գործունէութեան, ժողովը որոշեց խնդրել կառավարութեան և խնդրամատոյց լինել, որ կառավարութիւնը ուժեղացնէ տեղական գործունէութեան օրգանները, տալով զեմստվօի հիմնարկութիւններ այն նահանգներին և գաւառներին, որտեղ նրանք մինչև այժմ գոյութիւն չունէին։ Ժողովը այն կարծիքին էր, որ երբ տեղական ինքնագործունէութեան համար բացված կը լինի ասպարէզ, այն ժամանակ տեղական ոյժերով կարելի է մանր արհեստի և արդիւնաբերութեան խնդիրները տեղնուտեղը լուծել մի շարք գործնական ձեռնարկութիւններով։

Այդ եզրակացութիւնը համակրանք գըտաւ թէ երկրագործութեան մինիստրութեան շրջաններում և թէ մամուլի ու հասարակութեան մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Կիրակի, մարտի 24-ին, Թիֆլիսի արական I գիմնազիայի շինութեան մէջ տեղի ունեցաւ կովկասեան հնագիտական ընկերութեան նիստը, Լ. Լոպատինսկու նախագահութեամբ։ Ժողոված էին տասնվեց անդամներ եւ ներկայ էին մասնաւոր հիւրեր։

Նախագահը զեկուցեց, որ Մօսկվայի հնագիտական ընկերութիւնը իր փետրվարի 9-ի նիստում որոշել է ուղարկել Կովկասեան բաժնին 300 րուբլի՝ տարեկան տեղեկագիրը տպագրելու համար եւ խոստանում է հոգալ ծախքը այն հետազօտութիւնների համար, որոնք կը կատարվեն առաջիկայ ամառը Կովկասում քրիստոնէական յիշատակների ուսումնասիրութեան վերաբերմամբ։

Ե. Տօկայշվիլին յայտնեց, որ նա դիտաւորութիւն ունի լրացնել իր ճանապարհորդութիւնը Ախալքալաքի, Արդահանի եւ Օլթիի գաւառներում եւ հանել աւերակների եւ ուրիշ շինութիւնների լուսանկարները։

Ժողովը խնդրեց ներկայացնել ծրագիր՝ քննելու եւ հաստատելու համար։

Նախագահը զեկուցեց, որ Մցխեթից $2^1/_2$ վերստ հեռաւորութեան վրա գտնվող մի տեղում երկաթուղու վարչութիւնը պատահական գտել է մի հին գերեզմանատուն, որ պարունակում է բազմաթիւ հին իրեր։ Գտնվել են ոսկեայ եւ արծաթեայ դրամներ, կժեր, յուլունքներ, գինդեր, մատանիներ, քորոցներ։ Դրամները վերաբերում են 10 եւ 15—16 դարերին։ Ժողովում Մցխեթի հնութիւնները ցոյց տուեց Տէր-Աստուրեան, որը, իբրեւ սիրող, ձեռք էր բերել բանւորներից այդ իրերը։ Ժողովը որոշեց առաջիկայ զատկական տօներին ուղարկել այնտեղ մի յանձնաժողով, որ իր անմիջական հսկողութեան տակ կատարէ պեղումներ եւ որոշէ հնութիւնների իսկական բընաւորութիւնը։

Նախագահը յայտնեց, որ նա, կարդալով «Тифлисскій Листокъ»-ի մէջ, թէ նրա խմբագրութեան ուղարկել են Նուխու գաւառից մի հին արձանագրութիւն, ինքը գնացել էր խմբագրատուն եւ վերցրել արձանագրութիւնը, որ եւ ներկայացնում է ժողովականներին։ Ներկայ եղողները կարդացին արձանագրութեան մի կտորը։ Նա յունարէն էր. որոշվեց ձեռք բերել ամբողջ արձանագրութիւնը։

Բժշկ. Նաւասարդեան կարդաց մի զեկուցում հանգուցեալ Ս. Երիցեանի մասին եւ նրա յիշատակին։ Զեկուցանողը թուեց Երիցեանի գլխաւոր աշխատութիւնները եւ նրա կատարած դերը կովկասեան հնագիտութեան ասպարէզում։

Ժողովականները, լսելով զեկուցումը, յարգեցին հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով։

Այնուհետեւ Ե. Տօկայշվիլի կարդաց իր զեկուցումը այն արձանագրութիւնների մասին, որոնք ժողոված են կովկասեան մուզէումի մէջ։ Այդ արձանագրութիւններից ամենահետաքրքրականն է այն, որ բերված է Ճորոխի ափերից, Արդուինի շրջանի Օպիսի վանքի բեկորներից։ Արձանագրութեան մէջ յիշված է վրացական Բագրատունի Աշոտի մասին (Աշոտը մեռել է 866 թուին)։ Արձանագրութիւնը հին վրացական խուցուրի գրերով է։ Յետոյ զեկուցանողը յայտնեց, որ նա ստացել է Թաւրիզից արձանագրութեան մի պատճէն, որ վերաբերում է Վրաստանին։ Արձանագրութիւնը մի գաւազանի վրա է, որ գտնվում է հայոց եկեղեցում եւ երեւի տարված է այնտեղ պարսիկների՝ Վրաստանում կատարած արշաւանքների ժամանակ։ Արձանագրութեան մէջ յիշված է Լեչխումի իշխան Զուրաբ Աբաշիձէի դուստր Խվարամձէի անունը։

Հետեւեալ նիստը տեղի կունենայ զատկական տօներից յետոյ։

ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ

(Նամակ Բագուից)

Երկու տարին իր բոլոր ձախորդութիւններով բաւական էր՝ պատժելու, սթափեցնելու եւ դաս լինելու Բագուի առեւտրական աշխարհին։ Պէտք է ենթադրել, որ շատերը հաշտված կը լինեն այն իրողութեան հետ, որ անբնական է ոչ թէ ներկայ ժամանակը, այլ անցեալը, որը անողոք կերպով տրորեց գլուխ կորցրածների աչքերը։

Այժմ կամաց-կամաց Բագուն լուրջ եւ վայելուչ կերպարանք է ստանում։ Կեանքը տրամադիր է աւելի կանոնաւոր ընթացքով առաջ գնալ։ Մարդիկ այժմ ժամանակ են գտնում եւ իրանց կաշուից հեռվում իրականութիւններն էլ դիտելու, անձնական մորթեպաշտութիւնից աչք բանալու եւ ուրիշների մորթու գոյութիւնն էլ ընդունելու։ Կամաց-կամաց կազմվում են համայնական գործունէութեան ծրագրներով ընկերութիւններ, ինչպէս, օրինակ, նաւթարդիւնաբերողների նոր ընկերութիւնը, գործարանատէրերի միութիւնը եւ այլն։ Այդ շրջանից յետոյ «մանր» կոչված մարդկանց սթափումն է նկատվում. սեփական միջոցներով ինքնօգնութեան, փոխադարձ օգնութեան ընկերութիւնները լայնացնում են իրանց ծրագիրները, ընդարձակում են իրանց գործունէութիւնը։ Նկատելի է մի առանձին ոգեւորութիւն, լուրջ հետաքրքրութիւն. գրասենեկային պարապմունքներով զբաղվողները առանձին, արհեստաւորները առանձին, մասնաւոր գործերով պարապողները առանձին շտապում են միանալ, ընդհարվել, կապվել, որ վտանգի ժամանակ քիչ տուժեն, երկար դիմանան։ Ցիրաւի, ով ամենից շատ տուժեց այս փոթորկի ժամանակ, եթէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, մարտի 13-ին

Այսօր ձեզի պիտի պատմեմ բաւական հետաքրքիր պատմութիւն մը։

Թէհրան քաղաքը ունի Հայկազեան ուսումնարան անունով երկսեռ աշակերտներու դպրոց մը։ Այս հաստատութիւնը ինչպէս կապրի՝ ալ Աստուած գիտէ։ Ի՞նչպէս կապրին մեր ազգային հաստատութիւնները.—մուրացկանութեամբ։ Թէհրանցիներն եւս կէս մը ձեռք երկնցնելով, կէս մըն ալ ներկայացումներով՝ հազիւ հազ կը յաջողին իրենց վարժարանին ելեւմուտքը ծայր ծայրի բերել։

Տղայոց վարժարանը հինգդասեան է եւ ունի [illegible] ուսուցիչ՝ մէկը պարսիկ։ Աղջկանց ուսումնարանը չորսդասեան՝ եւ ունի մէկ ուսուցչուհի։ Ուսուցիչ հարկաւոր է։ Փող չը կայ։ Ուսուցչուհի հարկաւոր է։ Փող չը կայ։

Ամէն կողմէ ձայն։—Պարկաստանի մէջ կրթական գործը լաւ կազմակերպելու է։ Բայց այս փափագը յայտնողներին եւ ոչ մէկը տակաւին գիտը չը կրցաւ ըսել՝ որ ուսուցիչները ինչով ապրին։

Թէհրանի պէս կարեւոր կենտրոնի մը մէջ հայերը ունին մէկ ուսումնարան միայն։ Ու այն ալ նախնական։ Համամապատի եւ շրջակայ թաղերու մէջ բնակող հայ ծնողները իրենց տղաքն ու աղջիկները կուղարկեն կաթօլիկներու եւ բողոքականներու վարժարանը։ Մեր [illegible] եղող այդ աշակերտներուն եւ աշակերտուհիներուն թիւը կը հասնի 150-ի։ Կը լսէք, 150-ի։ Ամբողջ սերունդ մը ըսել է։

Իմ պատմութիւնս տակաւին նոր կը սկսի։ Հիմա լաւ մտիկ ըրէք։

Ինչու համար Թէհրանցիները Վերի Թաղին մէջ դպրոց չունին։ Փող չը կայ։ Միայն անոր համար որ փող չը կայ, փող տուող չը կայ։ Ո՛չ, այլ նաեւ անոր համար, որ փող եղեր է, բայց այս կամ այն փորերուն մէջ տեղաւորուեր է։

Ասկէց քանի մը տարի առաջ Թադուհի անունով կին մը, իր տունը տեղը, կահ կարասիքը, փողը, մուրհակով առնելիքները՝ կտակեր է այն նպատակին համար, որ Թէհրանի մէջ աղջկանց դպրոց մը բացուի։

Եթէ կտակին տրամադրութիւններուն նայենք, կտակուած փողը բաւական կարեւոր պէտք է ըլլայ, որովհետեւ կտակողը ցանկացեր է, որ ոչ միայն դպրոց մը կառուցուի, այլ եւ իր անունով չքաւոր աշակերտուհիներ ալ պահուին։

Ու պատահեր է՝ ինչ որ մեր ազգային կտակներուն գլուխը կը պատահի յաճախ։ Կտակի գործադրողները՝ որոնք՝ պէտք է շեշտել այս կէտը, կտակողին հեռուէն կամ մօտէն ազգականներ ըլլալու վտանգաւոր առաւելութիւնն ալ ունին, այնքան հեշտութեամբ իրագործեր են տիկին Թադուհիի ցանկութիւնները, որ եթէ ամբողջ Թէհրանը տակն ու վրա ընէք, Հայկազեան աղջկանց վարժարանէն զատ ուրիշ աղջկանց դպրոց չէք գտներ։

Այս դէպքերուն վրա, Եսայի եպիսկոպոսը Թէհրան կուգայ։ Այս աստուածավախ մարդն եւս, Թադուհիի կտակն իմանալով Թէհրանի մէջ վեր վար աղջկանց դպրոց կը փնտռէ։ Բայց այդպիսի հիմնարկութեան ստուերն անգամ չը գտնելով, կտակակատարներու օձիքէն կը բռնէ։ Բանը բանէն անցած էր սակայն։ Կտակի գումարին մէկ մասը հալեր էր կտակակատարներու կոկորդին մէջ։ Մարդ իր չը հասած գեղին տակը կը պառկի։ Եսայի եպիսկոպոս ալ նաւաբեկած կտակի բեկորները հաւաքելով կը գոհանայ։ Այդ բեկորները եթէ չեն կարող նոր նաւ մը շինելու ծառայել, գէթ կրնան նորոգուելու կարօտ նաւու մը ծակուծուկերը խցելու բաւել։

Արդ, խորհողներ եղեր են թէ՝ ազգին դրամը, ազգին ներկայացուցչին ձեռքը անցնելու, ա՛լ կրնանք հանգիստ քուն մտնել։ Ու իրաւ ալ հանգիստ քուն մտեր ենք։

Ի՞նչ է ըրեր Եսայի եպիսկոպոս ձեռքն անցած փողը։ Պատմութեանս հանգոյցը ահաւասիկ այստեղ է։ Մէկ մասը դրեր է Թումանեանց տան Թէհրանի ճիւղին մօտ։ Իսկ միւս մասը։ Աս կէտն այլ եւս մի՛ հարցնէք։ Միայն սա հարցը վճռեցէք թէ առաջնորդները իրաւունք ունե՞ն ազգային փողը, մանաւանդ նպատակը մասնաւորաբար սահմանուած, որոշուած փողը իրենց քէֆին համեմատ տրամադրելու։ Ի հարկէ ամենքը պիտի պատասխանեն ո՛չ։ Եւ Եսայի եպիսկոպոս մնացեալ դրամը «փոխ կուտայ» մի ո եւ է պարոնի, որուն անկարողութիւնը արեւուն չափ պայծառ էր ու է այս վայրկենիս։

Անտարակոյս նեղուածներուն օգնելը շատ գովելի գործ մըն է. բայց խնդիր է գիտնալ թէ առաջնորդը՝ կրթութեան բարձր ու անխարդախելի նպատակին յատկացուած ազգային փողը իրաւունք ունի՞ անհատներու բաժնելու։

Հարցումը՝ ինչպէս կը լսենք, պաշտօնապէս Այվազեան սրբազանի կողմէ ուղղուած է Էջմիածնի, որովհետեւ Եսայի եպիսկոպոսի գոյքն ու փողը պահ կը մնան Էջմիածին։

Տեսնենք ինչ պիտի պատասխանէ Էջմիածին։ Այո՞ թէ ոչ, կարելի է ազգային փողը անհատներու մէջ բաժնել առանց պատասխանատւութեան։

Կը խոստանամ անպատճառ ձեզի հաղորդել Էջմիածնի պատասխանը։

—

Թէհրանի «Խնամակալուհեաց ընկերութիւնը» կազմուեցաւ ու ան ալ անհամբեր հետաքրքրութեամբ կը սպասէ մի եւ նոյն պատասխանին։ Ո՞վ կարող է առանց փողի գործել, որ խնամակալուհիները գործեն։ Այսու հանդերձ եթէ գործելու բարի կամք ցոյց տան, շատ բաներ կըրնան ընել։ Մանաւանդ որ ընտրուած տիկինները Թէհրանի հասկացող ու լաւ ուժերէն են։ Ապագան պիտի ըսէ թէ իրենց վրա դրուած յոյսերը ո՞ր աստիճան հիմնաւոր են։

Վարդանանցի օրը՝ ուսումնարանի օգտին ներկայացուցինք «Ակամայ բժիշկ» եւ «Բանաստեղծ», «Միածին»-ի օժանդակութեամբ։ Հարիւր թումանէն աւելի զուտ արդիւնք գոյացաւ։

Ժողովուրդի մէկ մասը մի եւ նոյն ներկայացումի կրկնութիւնը պահանջած ըլլալուն համար, անցած շաբաթ իրիկուն մի եւ նոյն խաղերը նորէն ներկայացուցինք եւ «բարեգործական նպատակի» յատկացուցինք հասոյթը։ Երկրորդ ներկայացումէն 80 թուման շահ գոյացաւ։

Այվազեան սրբազանը յունվար ամսու մէջ տեսակցած էր Աթա-բէկը Ազամի՝ պարսից Մեծ-Եպարգոսին հետ, որ շատ սիրալիր ընդունելութիւն ըրաւ հայոց Առաջնորդին։ Սահակ արքեպիսկոպոս պարսկական տօնի առիթով ներկայացաւ Մուզաֆֆէրէդդին Շահին եւ բարի ճամբորդութիւն մաղթեց։ Շահինշահը, ինչպէս գրուեցաւ, վերստին պիտի ճամբորդէ դէպի Եւրոպա ու, լուրերուն նայելով, այս ամսու մէջ իսկ։

Տիգրան

ոչ իրանց օրական պարէնը հայթայթող թէ ինտելիգենտ, եւ թէ ոգէտ մշակները։

Ո՛չ պակաս հետաքրքրական են այժմ եւ բարեգործական հաստատութիւնները. աշխատանքի տունը, երեխաների խնամատար ընկերութիւնը, նոր կազմակերպված դժբաղդ կանանց պաշտպանող ընկերութիւնը, նոյն իսկ կենդանիներին հովանաւորող ընկերութիւնը այժմ աւելի շատ անդամներ են գրաւում, ժողովները այժմ աւելի բազմամարդ են լինում։

Ճիշտ է, այս բոլորը դեռ սաղմնային դրութեան մէջ է, այս բոլորը դեռ շատ թոյլ քայլերով է նշմարվում, բայց նշմարվում է... Սա իրականութիւն է եւ պէտք է ուրախանալ։ Եւ այս դէպքում, եթէ կայ մի ցանկալի բան, դա այն է, որ այս զգաստութիւնը լինի ո՛չ թէ անգործութեան, պարապութեան արդիւնք, այլ լուրջ գիտակցութեան, հետեւանք այն վտանգաւոր փորձանքի, որին ներկայ էր նոյն այդ հասարակութիւնը եւ որից այժմ ազատվելով, հնարաւորութիւն ունի օգտվելու անցեալի փորձանքներից եւ դէպքերից։

Ռ. Յովհանջանեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 18-ին

Շաբաթ, մարտի 16-ին, երեկոյեան ժամը 8-ին, Մանկավարժական Մուզէյի դահլիճում կայացաւ «Արեւելագիտական ընկերութեան» ընդհանուր ժողովը, ընկերութեան պատւաւոր նախագահուհի տիկին Լեբեդեվայի նախագահութեամբ եւ ընկերութեան նախագահ գեներալ Ն. Կ. Շվեդովի ատենապետութեամբ։ Նիստին ներկայ էին բազմաթիւ բարձրաստիճան անձինք, ինչպէս եւ Արեւելքի գործերով հետաքրքրվողների մի մեծ խումբ ու ընկերութեան անդամները։

Ատենապետը, բանալով նիստը, յայտնեց, որ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ բարեհաճել է ընդունել Արեւելագիտական ընկերութիւնը իր բարձր հովանաւորութեան տակ։ Ժողովը ծափահարութիւններով ընդունեց այս զեկուցումը։ Ապա ատենապետը զեկուցեց, որ ընկերութեան ճիւղեր են բացվել Տաշկէնտում, Բուխարայում, Ասխաբադում, Աստրախանում, Թիֆլիսում, Երեւանում։ Կարդացվեց Թիֆլիսի ճիւղի նախագահ Սուլթան-Կրիմ-Գիրէյի կազմած տեղեկագիրը ճիւղի գործունէութեան եւ ծրագրի մասին, որից երեւաց, որ Թիֆլիսի ճիւղը ծրագրել է հիմնել արեւելագիտական մատենադարան եւ արդիւնաբերական-առեւտրական մուզէյ, ուսումնասիրել Կուր եւ Արաքս գետերը՝ նաւարկութեան նպատակով, կազմակերպել Անդրկովկասի բնիկների համար արտաքոյ—դպրոցական կրթութիւն, հրատարակել լրագիր Ատրպատականի—Թուրքերէն եւ պարսկերէն լեզուներով։ Այդ նպատակների իրագործման համար Թիֆլիսի վաճառական Ալէքսանդր Մանթաշեան Թիֆլիսի ճիւղի նախագահի միջոցով այս օրերս ներկայացրել է 10,000 րուբլի ընկերութեան խորհրդին, դնելով այդ գումարը Օգոստափառ Հովանաւորի բարեհայեցողութեան տակ։ Ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել նուիրատուին եւ ընտրել նրան պատւաւոր հոգաբարձու ապագայում հիմնվելի արեւելագիտական դպրոցի։

Բացի դրանից, ընկերութեան խորհուրդը որոշել է բանալ Թէհրանում առեւտրական դպրոց տեղացիների համար, որի մէջ պէտք է աւանդվի եւ ռուսաց լեզուն. այդ նպատակի համար եղել են նուէրներ, նոյնպէս 10,000 ր., այն է մի անծանօթ անձն նուիրել է 5,000 ր. եւ 5,000 ր. էլ նուիրել է Հաջի-Զէյնալ Թաղիեվը։ Խորհուրդը ծրագրել է հիմնել կենտրոնական արեւելագիտական մատենադարան-ընթերցարան, առեւտրական-արդիւնաբերական մուզէօն եւ արեւելագիտութեան ճեմարան։

Զեկուցումից յետոյ տեղի ունեցան ընտրութիւններ։

Դրանից յետոյ ժողովը խորին հետաքրքրութեամբ լսեց Վ. Սեմեոնովի «Գործերի այժմեան վիճակը Փոքր-Ասիայում եւ Բաղդադեան երկաթուղին» վերնագրով ռէֆէրատը, որ հեղինակը լուսաբանում էր մոգական լապտերով իր լուսանկարած պատկերներով, որ հանել է Փոքր-Ասիայում կատարած իր ճանապարհորդութեան ժամանակ։

Ի նկատի ունենալով, որ Բաղդադի երկաթուղու հարցը ներկայումս կարեւոր քաղաքական հարցի կերպարանք է ստացել, մանաւանդ ֆրանսիական արտաքին գործերի մինիստր պ. Դելկասէի վերջերս տուած բացատրութիւններից յետոյ, ռուսաց մամուլը իր քննութեան լուրջ առարկայ է դարձրել այդ հարցը, տարակոյս չը կայ, որ զեկուցումը բաւական տաք եւ լուրջ վիճաբանութիւններ առաջ բերեց։ Զեկուցումը նոյնպէս հաստատեց այն իրողութիւնը, որ այդ երկաթուղին ահագին զարկ եւ ծաւալ կը տայ գերմանական ազդեցութեան ամբողջ Փոքր-Ասիայում եւ Գերմանիան կը հաստատէ իր տնտեսական տիրապետութիւնը այդ երկրի վրա։ Զեկուցանողը նկարագրեց առաջ Փոքր-Ասիայի տնտեսական վիճակը 80-ական թուականների սկզբին եւ լուսաբանեց առաջ եկած փոփոխութիւնները։ Գերմանական ընկերութիւնը, որ ստացել է Բաղդադի երկաթուղու շինութեան կօնցէսիան, պարտաւորվել է կառուցանել այդ ճանապարհը 8 տարվայ ընթացքում։ Զեկուցանողի կարծիքով, ընկերութիւնը կիրագործէ իր յանձն առած պարտաւորութիւնը եւ այդ երկաթուղին ահագին օգուտներ կը տայ գերմանական ընկերութեան, ունենալով սկզբնակէտ Կօնիան եւ վերջնակէտ—Պարսից ծոցը։ Այդ երկաթուղին կը կերպարանափոխէ Փոքր-Ասիայի ամբողջ վիճակը եւ ահագին փոփոխութիւններ առաջ կը բերէ։

Ինչպէս յայտնի է, Պետերբուրգի մամուլը, գլխաւորապէս «Новое Время» եւ նրան համագաղափարակից լրագիրները, մեծ յոյս էին տածում, որ Ֆրանսիան կը հրաժարվի որ եւ է մասնակցութիւն ունենալ Բաղդադի երկաթուղու շինութեան գործի մէջ, ի նկատի ունենալով, որ այդ ձեռնարկութիւնը ուղղված է ուղղակի Ռուսաստանի շահերի դէմ եւ նրա իրագործումը կարող է թուլացնել Ռուսաստանի քաղաքական գերակշռութիւնը Փոքր-Ասիայի վրա։ Սակայն Դելկասէի ճառը չիրականացրեց այդ յոյսերը եւ «Новое Время» լրագիրը իր այսօրվայ առաջնորդող յօդուածով խիստ քննադատութեան է ենթարկում ֆրանսիական մինիստրի ընթացքը, ասելով որ «մինիստր Դելկասէն բոլորովին ծուռ ճանապարհի վրա է կանգնած»։

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

Մարտի 7-ին

«Մշակի» անցեալ տարվայ վերջին համարներից մէկում մենք հաղորդել էինք, որ տեղիս հասարակական գրադարանի մասնաժողովը, ի նկատի ունենալով, որ տեղական հայ հասարակութիւնն էլ կարող է իր շրջանից գրադարան յաճախողների մի որոշ թիւ կազմել, մտադրվել էր յունվարից բերել տալ հայերէն պարբերական հրատարակութիւններից եւ այնուհետեւ ունենալ նաեւ գրքեր։ Բայց որովհետեւ այդ հարցը նախ լաւ հողի վրա չէր դրված եւ մանաւանդ այդտեղ անհրաժեշտ էր հայերիս աջակցութիւնը, ուստի նա չարժանացաւ մեր ուշադրութեան եւ մնաց անկատար մինչեւ այսօր։

Սակայն մինթէ բաւական չը պիտի լինէր այն, որ հարցը բարձրացել էր, միտքը արծարծվել, այն էլ շնորհիւ օտարների։ Մինթէ այնուհետեւ մեր պարտքը չը պիտի լինէր ջանքեր գործ դնելու՝ այդ միանգամայն գեղեցիկ միտքը իրականացնելու, որ մի չնչին զոհողութիւնով է վերջանալու։ Բայց մենք՝ ինչպէս ամեն մի հասարակական հարցում, ուր պիտի գործ տեսնէ մեր բարոյական պարտականութեան զգացումը, որ կատարելապէս բացակայում է մեր մէջ՝ այստեղ եւս անտարբեր գտնվեցինք, անկարող եղանք օգտվել բարեբաստիկ հանգամանքից, չունենալով, նոյն իսկ, գոնէ ինքնասիրութեան զգացմունքի մի նշոյլ...

Այդ մի անգամ կատարված սխալը դարձեալ կարելի է ուղղել, եթէ, գոնէ այսուհետեւ, դուրս գային այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ծանօթանային գրադարանի վարչութեան հետ, դիմում անէին եւ յետոյ անմիջապէս ձեռնարկէին գործին։ Այստեղ ոչ մի առանձին դժուարութիւն չէ ներկայանում. Նախ հարկաւոր կը լինի խորհել, ի հարկէ, այն միջոցների մասին, թէ ինչ ձեւով հայթայթել նիւթականը, որպէս զի հնար լինի սկզբում գոնէ պարբերական հրատարակութիւններ բերել տալ, իսկ այնուհետեւ ժամանակի ընթացքում հետզհետէ աւելացնել եւ հայերէն գրքերի քանակութիւնը։

Եթէ իւրաքանչիւր տարի մի ներկայացում տրվի սիրողների միջոցով, որից առնուազն կարելի է զուտ օգուտ ստանալ 180—200 րուբլի, եթէ աշխատողները մի փոքր ջանք չը խնայեն—այդ գումարից արդէն կարելի է 70—80 ր. յատկացնել միայն թերթերին, իսկ մնացորդը՝ հայերէն գրքերին։ Այսպէս՝ իւրաքանչիւր տարի աւելացնելով գրքերի քանակութիւնը, ապագայում կարող է այդ հասարակական գրադարանի հայկական բաժինը, եթէ ոչ լիակատար համարվել, գոնէ մասամբ բաւականութիւն տալ տեղական հայ ընթերցողների հոգեւոր պահանջներին։

Մենք միանգամայն համոզված ենք, որ այդ գեղեցիկ միտքը իրականացնելու համար ջանք չի խնայի եւ իր պարտքը կը համարէ նաեւ մեր «կանանց բարեգործական ընկերութեան» վարչութիւնը եւ մանաւանդ այդ նպատակին կը նուիրէ այն գրքերը, որ անցեալ տարի ստացել էր տեղիս թատերասէրներից։ Նոյնպէս մեծ պարտք կայ այդ գործը առաջ տանելու համար տեղիս երիտասարդութեան վրա, որը բացի ներկայացում տալուց՝ իր մօտ ունեցած գրքերից եւ մասամբ ուրիշներից հաւաքելով, կը յատկացնէ գրադարանի հայկական բաժնին։

Հաւատացած ենք, որ այս կարեւոր խնդիրը առկախ չի մնայ եւ մեր հասարակութեան պիտանի անդամները եռանդուն աջակցութիւն ցոյց կը տան այդ գործում։ Յուսանք եւ սպասենք։

Յ. Թումանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, մարտի 15-ին

«Մշակի» ներկայ տարվայ 41-րորդ եւ 42-րդ համարներում՝ հանգուցեալ Տէր Գաբրիէլ Պատկանեանի մասին լոյս տեսած բժ. Քարաքաշի յօդուածի առիթով պարտք եմ համարում առաջիկայ տեղեկութիւնը հաղորդել։

Պ. Քառաքաշի գրութեան համաձայն՝ Տ. Գաբրիէլից յետոյ մնացած գրադարանը եւ նրա ձեռագիր աշխատութիւնները անցել են նրա կրտսեր որդի պ. Վահագն Պատկանեանի ձեռքը, որը յետոյ այդ բոլորը յանձնել է իր փեսայ Գասպար Ս. Եաղուբեանին. իսկ սրա վաղաժամ մահից յետոյ (1896 թ.) թէ մատենադարանը եւ թէ ձեռագիրը մնացել են իբրեւ սեփականութիւն նրա այրի՝ տիկին Ալմաստ Եաղուբեանին։

Անցեալ սեպտեմբերի 21-ին ես մի նամակ ստացայ մեծ. տիկին Եաղուբեանից, որը յայտնելով ինձ իր ամուսնուց յետոյ մնացած 2 արկղ հայերէն գրքերի եւ Տէր Գաբրիէլ Պատկանեանի բազմաթիւ ձեռագրերի մասին, առաջարկում էր ինձ «ընդունել գրքերը, որպէս եւ ձեռագրերը ի լիովին իմ սեփականութիւն եւ կամ գէթ ցոյց տալ, թէ ո՛ւր կարելի էր աւելի օգտաւէտ կերպով տեղաւորել նրանց»։—Ես շնորհակալութեամբ ընդունեցի մեծ. տիկնոջ առաջարկութիւնը եւ հոկտեմբերի 25-ին ստացայ յիշեալ 2 արկղ գրքերը ձեռագրերի հետ միասին։

Նախ՝ ես սկսեցի կարգաւորել գրքերը եւ որոշել նրանց թիւը. դրանց մեծագոյն մասը, ինչպէս ես գիտեցի, հանգուցեալ Գ. Եաղուբեանի կազմած մատենադարանից էին եւ միայն փոքրագոյնը՝ Տէր Գաբրիէլի ժողովածուից, որ գլխաւորապէս հնատիպ գրաբար գրքերից եւ իր տպագիր աշխատութիւններից է բաղկացած. ընդամենը 483 կտոր հայերէն գրքեր ու բրօշիւրներ էին, որոնցից մի քանի տասնեակը 3,5 եւ երբեմն 10 եւ աւելի օրինակներ ունէին։ Այդ գումարից մի մասը տիկին Եաղուբեանի անունից իբրեւ նուէր յանձնել եմ ես Լազարեան ճեմարանի մայր մատենադարանին, մնացեալ մասը բաժանելու եմ այլ եւ այլ հայ գրադարաններին՝ հանգուցեալ Գ. Եաղուբեանի յիշատակին։

Գրքերից յետոյ ես սկսեցի կարգի բերել ցիր ու ցան մնացած ձեռագրերը, որոնք բոլորն էլ Տ. Գաբրիէլի գրչի արտադրութիւնն են։ Դրանց մանրամասն ցուցակը լոյս կը տեսնի մօտերս՝ գուցէ «Արարատում». իսկ մինչ այն աւելորդ չը համարեցի հետաքրքրվողների համար այս համառօտ տեղեկութիւնը։

Տէր Գաբրիէլից յետոյ մնացել են բազմաթիւ անտիպ ձեռագիր մանր ու խոշոր երկասիրութիւններ—կրօնական (մօտ 15 կտոր), տումարական (օրացոյց եւ այլն—10 կտոր), բանաստեղծական, գրականական, պատմական, իրաւաբանական եւ այլ բովանդակութեամբ (35-ից աւելի)—մեծ մասը ինքնուրոյն եւ մասամբ թարգմանական, շատերը դրանցից երկու եւ աւելի անգամ արտագրված լինելով հեղինակից։ Դրանցից շատ կան նամակներ այլ եւ այլ անձնաւորութիւններից եւ իր՝ Տէր Գաբրիէլի նամակների սեւագրութիւնները։—Այս հաշւի մէջ չեն 20-ից աւելի այլ եւ այլ ձեռագիր երկեր, որոնք լոյս են տեսել դեռ հեղինակի օրով եւս եւ ուրիշ անձերի պատկանած ձեռագիր աշխատութիւններ (5 կտոր)։

Անտիպ ձեռագրերի մէջ չէ երեւում պ. Քառաքաշի յիշած Տէր Գաբրիէլի հետաքրքրական երկը՝ ինքնակենսագրութիւնը», որը գուցէ նոյնը լինի, ինչ որ նրա «Ներսէս Ե. կաթողիկոս եւ Հայրապետ ամենայն հայոց» ձեռագիր աշխատութիւնն է՝ 65 կիսածալ թերթից բաղկացած։

Պ. Քառաքաշի ակնարկած Շէքսպիրի թարգմանութիւններից կայ միայն մի հատուած «Համլէտից»—այն է առաջին գործողութեան ա. եւ բ. տեսարանը։ Թարգմանութիւններից յիշելու է եւ մի փոքր հատուած Բօքլից։

Գալով ձեռագրերի տնօրէնութեանը՝ ես մըտադիր եմ, նրանց ցուցակը տպագրելուց յետոյ, առաջարկել ցանկացողներին տպագրելու նրանց. ինչ որ հնար եղաւ ինքս կը տպագրեմ, բայց յամենայն դէպս ցանկալի է, որ վերջ ի վերջոյ Տէր Գաբրիէլի ձեռագրերը ամփոփվէին Էջմիածնի Մայր Աթոռի մատենադարանում։

Պրօֆէսոր Գր. Խալաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆինանսների մինիստրը արտակարգ կարգադրութիւն է արել 32,000 րուբլի տալու պետական գանձարանից՝ Գանձակի եւ Բագուի նահանգներում, ինչպէս նաեւ Դաղստանի շրջանում երեւեցած մորեխը ոչնչացնելու համար։

—

Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որ նշանակված էր կիրակի, մարտի 24-ին, չը կայացաւ, որովհետեւ ներկայ եղող անդամների թիւը օրինական չէր։ Լսում ենք, որ յիշեալ ժողովը տեղի է ունենալու առաջիկայ կիրակի, մարտի 31-ին։ Յոյս ունենք, որ այս անգամ յարգելի անդամները չեն զլանայ իրանց ներկայութեամբ հնարաւոր դարձնել ժողովի կայանալը։

—

Երէկ, երկուշաբթի, մարտի 25-ին, սկսվեցին Թիֆլիսի արքունական եւ արտիստական ընկերութեան թատրոններում ներկայացումները։ Արքունական թատրոնում առաւօտեան՝ տրվեց Լիւչիա օպերան, որի մէջ նորից հանդէս եկաւ երգչուհի Տետրացինի եւ ունեցաւ մեծ աջողութիւն։ Երգչուհու ձայնը բոլորովին կազդուրվել է եւ հնչում է իր բոլոր ոյժով եւ գեղեցկութեամբ։ Երեկոյեան ներկայացվեց Ռոմէօ եւ Ջուլիետտա օպերան, որտեղ մասնակցեց Պետերբուրգից եկած նշանաւոր երգիչ Ֆիգնէր։ Հասարակութիւնը ողջունեց նրան աղմկալից ցոյցերով եւ ներկայացման ժամանակ բուռն ծափահարում էր։ Ֆիգնէր երգում է մեծ հմտութեամբ եւ գրաւում է իր երաժշտականութեամբ եւ նուրբ խաղով։ Հասարակութիւնը լցրել էր թատրոնը։

—

Մեզ ուղարկված է Մողնու ս. Գէորգ եկեղեցու երէցփոխ իշխան Ա. Բէհբուդեանցի կազմած այդ եկեղեցու եկեւմուտքի համառօտ հաշիւը, որից երեւում է հետեւեալը. մուտք եղել է 3,917 րուբլի 19 կոպէկ, իսկ ծախք 3,287 ր. 65 կ. այդպիսով զուտ արդիւնք կազմվել է 629 րուբլի 54 կոպէկ։ Ծախքի գումարների մէջ հաշւած է եւ 150 րուբլի, որ իբրեւ առձեռն դրամ գտնվում է բանկում։

—

Տնայնագործական արդիւնաբերութեան ասպարէզում գործողների մէջ, մայրաքաղաքի լրագիրների ասելով, միտք է ծագել հրատարակելու մի պարբերական թերթ, որ նուիրված լինէր տնային մանր արդիւնաբերութեան կարիքներին։

—

Ներկայ թւականի նաւարկութեան սեզոնի հէնց սկզբից ռուսաց զինուորական նաւատորմի բոլոր նաւերը կը ստանան ապպարատներ անթել հեռագիրների գործադրութեան համար, պրօֆէսոր Պոպովի սիստեմով։

—

Կառավարիչ սենատը բացատրեց, որ քաղաքային դումաներից եւ լիազօրների ժողովներից է կախված շարունակել ռոճիկ տալ քաղաքային հիմնարկութիւնների այն ծառայողներին, որոնք ժամանակաւորապէս հեռացրված են պաշտօնից եւ ենթարկված են դատաստանական քննութեան։

—

Կանանց վիճակի բարւոքման ընկերութիւնը մօտ ժամանակներումս միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ, որով խնդրում էր թոյլ տալ կանանց մտնել համալսարանները համաձայն այն կանոնների, որոնք սահմանված են ուսանողների համար։ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, կառավարութիւնը մերժել է ընկերութեան այս միջնորդութիւնը։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Մոսկվայից, թէ ձեռնարկվում է մի ընդարձակ օրէնսդրական աշխատանք հիմնովին վերափոխելու եւ լրացնելու թատրոնին եւ ներկայացումներին վերաբերեալ օրէնքները։ Այս նպատակով ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ կազմվում է մի մասնաժողով, որին կը մասնակցեն թատրոնների եւ ներկայացումների վրա հսկող հիմնարկութիւնների բարձր ներկայացուցիչները։ Բացի յիշված մասնաժողովից, կազմվում է ռուսաց թատրոնական ընկերութեան

Օգոստափառ հովանաւոր Մեծ-Իշխան Սերգէ Միխայլօվիչի նախագահութեամբ, մի ուրիշ նախապատրաստական մասնաժողով, որ թատրոնական գործին վերաբերեալ նիւթեր ժողովելով եւ մշակելով՝ մի ծրագիր կը ներկայացնէ գլխաւոր մասնաժողովին։ Թատրոնական օրէնսդրութեան վերաքննութեանը մասնակցելու կը հրաւիրվեն եւ այն գործիչները, որոնք անմիջական շահերով կապված են թատրոնի հետ։

—

«Новое Время» լրագրի ասելով, Պետերբուրգի հօլլանդական կոմիտէտը, որ կազմված է հիւանդ եւ վիրաւոր բօէրներին օգնութիւն ցոյց տալու համար, Հօլլանդիայից տեղեկութիւն է ստացել, թէ բօէրական հարաւ-աֆրիկական երկու հանրապետութիւնների եւ Անգլիայի մէջ սկսված են խաղաղութեան բանակցութիւններ։

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Ամբողջ երկու տարի մնալով առանց քահանայի, ահա մօտ հինգ ամիս է, որ Աստրախանի կօնսիստօրիան մեզ մի քահանայ է ուղարկել։ Չը նայելով, որ մեր ժողովուրդը մեծ յոյսեր ունէր այդ նորեկ երիտասարդ քահանայի վրա, սակայն նրա յոյսերը միանգամայն ի դերեւ ելան։ Այդ շատ կարճ ժամանակամիջոցում տէր-հայրը արդէն շտապեց ցոյց տալ իր անհաշտ բնաւորութիւնը, իր արհամարհանքը դէպի ժողովուրդը։ Նա նոյն իսկ թոյլ է տալիս իրան ասելու թէ՝ եկեղեցին իրան է պատկանում եւ ժողովուրդը ոչ մի իրաւունք չունի խառնվելու եկեղեցական գործերում։ Մենք շատ ենք ցաւում, որ Աստրախանի կօնսիստօրիան այս անգամ սխալվել է իր ընտրութեան մէջ։ Ժողովրդի մեծամասնութիւնը լարված է տէրտէրի դէմ եւ ուզում է բողոքել, համոզված լինելով, որ Աստրախանի կօնսիստօրիան երբէք չի խեղդի ժողովրդի արդար ձայնը եւ կը սանձահարէ անշուշտ տէրտէրի դատապարտելի վարմունքը»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Ահա մի ամբողջ շաբաթ է մեզ մօտ շարունակաբար ներկայացումներ է տալիս ռուսաց դերասանական մի խումբ, ասխաբադցիներին լաւ ծանօթ՝ դերասան Եանօվի ղեկավարութեամբ։ Խումբը բաղկացած լինելով մի քանի նաեւ լաւ ույժերից, ներկայացումները անշուշտ—թէեւ սահմանափակ կերպով—պատճառում են թատրոն յաճախող հասարակութեան էսթետիքական բաւականութիւն։ Ռեպերտուարի մէջ, ի միջի այլ պիեսների՝ կար նաեւ Դօստոեվսկու յայտնի «Идiотъ» հոգեբանական գրուածքի փոխադրութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լայպցիգ, մարտի 31-ին

Մարտի 24-ին, երկուշաբթի երեկոյեան, Լայպցիգի «Hotel de Prusse» առաջնակարգ հիւրանոցի ընդարձակ դահլիճում մեր հայրենակիցներից մէկը, պօլսեցի վիօլօնչելիստ պ. Տիրան Ալէքսանեան, յայտնի երգչուհի Ֆրիդա Ֆրօյլէր-Գրիւտցմախէրի եւ դրեզդէնցի նշանաւոր դաշնակահար պ. Պ. Շերվօղի բարեհաճ մասնակցութեամբ, մի կօնցերտ տուեց, որը ընդհանրապէս մեծ աջողութիւն ունեցաւ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Բեթհօվէն, Շուբերտ, Մօցարտ, Բախ եւ ուրիշ շատ աշխարհահռչակ կօմպօզիտօրների հայրենիք Գերմանիայում երաժիշտ գեղարուեստագէտներից մեծ, հիմնաւոր եւ ճիշդ պահանջներ են անում եւ բացի դրանից, որ պ. Տ. Ալէքսանեանը դեռ շատ երիտասարդ է (մօտ 22 տարեկան) եւ նոր է դուրս եկել երաժշտական ասպարէզ։ Թողնելով մի կողմ մեր անհատական կարծիքը, այստեղ թարգմանաբար առաջ բերենք Լայպցիգի երկու գլխաւոր օրաթերթերի երաժշտական նշանաւոր ռեցենզենտների կարծիքը պ. Տ. Ալէքսանեանի երաժշտական ընդունակութիւնների մասին առանձնապէս եւ տուած կօնցերտի աջողութեան մասին ընդհանրապէս։

«Leipziger Tageblatt» նշանաւոր օրաթերթի երաժշտական մասնագէտ ռեցենզենտ Ֆ. Վիլֆերօդը գրում է հետեւեալը. «Պօլսեցի երիտասարդ վիօլօնչելիստ պ. Տիրան Ալէքսանեան «Hotel de Prusse»-ի դահլիճում երէկ մի կօնցերտ տուեց եւ ինչպէս ինքը, այնպէս էլ նրա հետ մասնակցող կօնցերտային երգչուհի Ֆրիդա Ֆրօյլէր-Գրիւտցմախէրը եւ պիանիստ պ. Պ. Շերվօղը (վերջին երկուսն էլ Դրեզդէնից) լաւ ընդունելութիւն գտան հասարակութեան կողմից։ Ինչպէս յայտնի է, պ. Տ. Ալէքսանեան Դրեզդէնի պրօֆեսօր Գրիւտցմախէրի աշակերտներից մէկն է եւ ինչպէս նրա երէկվայ խաղը ցոյց տուեց, երաժշտական մի լաւ շկօլայի ազդեցութիւնն է կրում իր վրա։ Պ. Տ. Ալէքսանեանը, ի հարկէ, դեռ եւս չէ գտնվում իր կարողութեան ամենաբարձր աստիճանի վրա եւ չէ հասել վարպետութեան գագաթնակէտին։ Ցամենայն դէպս նրա նուագման մէջ աչքի են ընկնում ինտօնացիայի մաքրութիւն, տեխնիքական բաւարար հարթութիւն, հնչականութիւն, կրքոտ տեմպերամենտ եւ դժբաղդաբար վերջին ողորկումից զուրկ ձայնատւութիւն։ Մի քանի բաներ, օրինակ նրա անհանգիստ կերպով նուագելը, նրա մեզ համար օտարոտի զգացմունքը եւ այլն կապված են գլխաւորապէս նրա ազգայնութեան հետ։ Ցանկալի էր նրա նուագման մէջ աւելի համաչափութիւն եւ սահունութիւն տեսնել։ Ցամենայն դէպս կարելի է յուսալ, որ ապագայում պ. Տ. Ալէքսանեանի գեղարուեստական զարգացումը աջող է լինելու, մանաւանդ որ նա արդէն այնպիսի յատկութիւններ ունի, որոնց եթէ նա հանգիստ կերպով մշակէ, կարող է իր գեղեցիկ եւ ցանկալի նպատակին հասնել։ Պ. Տ. Ալէքսանեանը ամենից առաջ պիանիստ պ. Շերվօղի ներդաշնակութեամբ խնամքով նուագեց Բեթհօվէնի չելլօ-սօնատները (op. 49, A-dur), յետոյ նուագեց Դ. Աուբէրի մի քանի A-moll կտորները, որոնք Գերմանիայում մոռացված ու անյայտ են եւ, ինչպէս երեւում է, բոլոր ներկայ եղողները առաջին անգամն էին լսում։ Ամենից քիչ մենք հաւանեցինք երրորդ Rondo կտորը, այն ինչ առաջին եւ երկրորդ կտորները դուրեկան էին»։

«Leipziger Neueste Nachrichten» նոյնպէս նշանաւոր օրաթերթը գրում է հետեւեալը. «Մի երիտասարդ տաճկական (հեղինակը սխալմամբ կարծում է Ալէքսանեանը տաճիկ է) չելլիստ պ. Տ. Ալէքսանեանը երկուշաբթի օրը, երեկոյեան նուագեց Լ. Ֆ. Բեթհօվէնի A-dur սօնատները եւ «Stummenvon Portici»-ի հեղինակ Դանիէլ Ֆրանսուա Աուբէրի Գերմանիայում դեռ եւս անյայտ մի երկար կտորը։ Այդ սօնատների նուագելու եղանակից երեւում է, որ պ. Տ. Ալէքսանեանը լաւ շկօլայով է անցել։ Բայց նրա տեխնիկան դեռ շատ բռնութիւններ ունի եւ գելլոյի ձայնը դեռ շատ պէտք է յստակվի եւ ներդաշնակվի։ Աուբէրի կտորները պարունակում են իրանց մէջ մի շարք գրաւիչ, դուրեկան, բայց եւ ոչ սերտ կերպով միացած մելօդիաներ, որոնցից Andante-ն պ. Ալէքսանեանը գեղեցիկ նուագեց։ Աջող էր եւ Rondo ֆանտաստիքական թեման։ Բայց, ընդհանրապէս վերցրած, Աուբէրի կտորները արդէն հնացած են»։

Ահա այս է գերմանական մասնագիտական կարծիքը պ. Տ. Ալէքսանեանի մասին, որ դեռ շատ երիտասարդ է եւ յուսալի ապագայ ունի։ Լաւ կը լինէր, եթէ պ. Ալէքսանեանը սովորէր եւ հայերէն (բոլորովին չը գիտէ) եւ հայկական երաժշտութեան մշակմանը նպաստէր։ Վիօլօնչելիստ Ալէքսանեանը Լայպցիգից հեռացաւ Գերմանիայի միւս խոշոր քաղաքներում էլ կօնցէրտներ տալու։ Ինչպէս այսօր Բերլինի գլխաւոր թերթերը հաղորդում են, երէկ պ. Ալէքսանեանը այնտեղ էլ մի կօնցէրտ է տուել։ Վերոյիշեալ թերթերն էլ մի եւ նոյն տեխնիքական պակասութիւնները վերագրում են նրա նուագմանը, բայց մի եւ նոյն ժամանակ յոյս են տածում, որ հայ վիօլօնչելիստը լաւ ապագայ կարող է ունենալ, եթէ բարեխղճաբար նուիրվի իր սիրած գելլոյին։

Հաղորդում եմ էլի մի քանի լուրեր։

Գերմանական աշխարհագրական, ազգագրական եւ մարդաբանական յայտնի շաբաթաթերթ «Globus»-ում էտնօգրաֆ Ն. Ֆ. Ջայդլիցը մեծ գովասանքով է խօսում պ. Հ. Առաքելեանի այն զեկուցման մասին, որ նա արել է պարսկական բաբիական աղանդի մասին ռուսաց աշխարհագրական ընկերութեան կովկասեան սեկցիայում, տալիս է այդ գիտնական դասախօսութեան մանրամասն բովանդակութիւնը եւ շեշտում է նրա բարեխղճութեան վրա։

Մի քանի օր սրանից առաջ թէ աւստրիական եւ թէ գերմանական թերթերում լոյս տեսան մի քանի աննպաստ լուրեր Վիէննայի պարսից դեսպան հայազգի Նարիման խանի մասին, իբր թէ նա իր պատասխանատու պաշտօնը եւ պարսից կառավարութեան դէպի իրան տածած վստահութիւնը ի չարն է գործ դրել եւ մի շարք կաշառքներ է վերցրել պարսիկներից եւ աւստրիացիներից։ Այդ մասին խօսք եղաւ եւ աւստրիական րայխսրատի վերջին աղմկալից նիստում, որտեղ մինիստր Քիօրբէրը այդ բանը պաշտօնապէս հերքեց եւ մատնացոյց արեց այդ լուրերի բոլորովին անհիմն լինելու վրա։ Ինչպէս երեւում է, տարածված լուրերի հեղինակները չէին կարողանում վայելել Նարիման խանի բարեկամութիւնը։

Գերմանացի յայտնի արեւելագէտ Դելիչ, որի «Բաբելօն եւ Աստուածաշունչ» վերնագրով գիտնական ուսումնասիրութիւնը մեծ աղմուկ հանեց Գերմանիայում եւ գիտնական աշխարհում մեծ ընդունելութիւն գտաւ, ճանապարհ ընկաւ դէպի Միջագէտք հնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով։

Լ. Բաբայեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily Mail» լրագրին հաղորդում են, որ Լօնդօնում տեղեկութիւն է ստացված, թէ խաղաղութեան բանակցութիւնները, որոնք այժմ տեղի ունեն անգլիական կառավարութեան եւ հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների ներկայացուցիչների մէջ, հաւանականօրէն աջող ելք կունենան։ Բրիտանական կառավարութիւնը բոլորովին վստահ է Շալկ-Բուրգէրի եւ նրա ընկերների մտադրութիւնների անկեղծութեանը եւ այն պայմանները, որոնց վրա պնդում է տրանսվաալեան կառավարութիւնը, չեն պարունակում իրանց մէջ ոչ մի անյաղթելի արգելք համաձայնութիւն կայացնելու համար։

—«Trieste» պաշտօնական լրագրին հաղորդում են Սկուտարիից, որ Ալբանիայում տիրում է կատարեալ անիշխանութիւն։ Սպառազինված հրոսակներ շրջում են ամբողջ երկրում եւ ճանապարհները Սկուտարիի ու Պրիզրէնի միջեւ ապահով չեն։ Հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատված է. այն զօրախումբը, որ ուղարկված էր աւազակների դէմ, գերի է առնված։ Աւազակների հետ կապած համաձայնութեամբ՝ նահանգապետը ստիպված էր նահանջել իր բոլոր զօրքերով նրա համար, որ գերի ընկած զօրաբաժինը ազատ թողնվէր։ Ծովաժինեայ քաղաքներում տիրում է աւազակութիւն։ Եանինայի նահանգի բնակիչները չափազանց դժգոհ են նահանգապետ Օսման փաշայից. մի կոչի մէջ, որ տարածված է ազգաբնակութեան զանազան խաւերում, պահանջվում է նրա մահը։ Եանինայում զօրքերը մի տարվայ ընթացքում չեն ստացել ոչ ռոճիկ եւ ոչ հագուստ։ Ապստամբութիւնը տարածվում է եւ հետզհետէ գրաւում է աւելի եւ աւելի լայն շրջաններ։ Ֆերամիտում եւ Պարամիտում տեղի են ունենում արդէն փողոցային անկարգութիւններ։

—Կ. Պօլսից հաղորդում են «Berliner Tagebl.» լրագրին, որ թիւրքական գահաժառանգ պրինց Րէշիդ-էֆֆէնդի, սուլթանի եղբայրը, մեռաւ մի քանի շաբաթ շարունակվող ծանր հիւանդութիւնից յետոյ։

—Ենայի համալսարանի պատմութեան պրօֆէսօր Գէլցեր իր ճանապարհորդութեան նկարագրութեան մէջ, որ նա կատարել է Թիւրքիայում եւ Յունաստանում, ի միջի այլոց, հետեւեալ տեղեկութիւնն է հաղորդում, որպէս ապացոյց այն բանի, որ ռուսական ազդեցութիւնը թիւրքական կառավարչական շրջանների վրա անհամեմատ գերակշիռ է եւրոպական միւս պետութիւնների ազդեցութիւնից։ «Հայկական կոտորածների ժամանակ Կ. Պօլսում,—ասում է Գէլցեր,—մեծ պետութիւնների դեսպանները մէկը միւսից յետոյ յայտագրեր էին ուղարկում Իլդիզ-Կիօսկ՝ պահանջելով վերջ դնել կոտորածին։ Պետութիւնների պահանջի վրա ոչ մի ուշադրութիւն չէր դարձնվում։ Վերջապէս ռուսաց դեսպան Նելիդօվ ուղարկեց դեսպանութեան առաջին թարգման Մաքսիմօվին Իլդիզ-Կիօսկ մի վերջնագրով, որի մէջ ասված էր, որ եթէ թիւրքական կառավարութիւնը 24 ժամում չի դադարեցնի արիւնհեղութիւնը, Ռուսաստանը վճռական միջոցներ ձեռք կառնէ։ Դեռ եւս Մաքսիմօվ չէր վերադարձել դեսպանատուն, որ խիստ հրաման տրվեց սուլթանի կողմից դադարեցնել կոտորածը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լեռնային ինժեներների ընկերութեան մէջ պրօֆէսօր Վօյսլավ հանդէս եկաւ տեխնիքական բարձրագոյն ուսման վերակազմութեան նախագծով, որի հիմքը պէտք է լինի այն, որ ունկնդիրները պէտք է ընտրեն առարկաները իրանց հայեցողութեամբ։ Քննութիւնները կատարում են կառավարչական յանձնաժողովները առանձին առարկաներից։ Ունկնդիրները առանձնացրած են դպրոցից։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաստանի յայտնի բժիշկ, պրօֆէսօր Լէյդէն ապրիլի 20-ին տօնում է իր ծննդեան 70-ամեակը։

ԵՐՈՒՍԱՂԷՄ։ Ռուսաց տաճարում երէկ մաղթանք կատարվեց այն իրադէի հրատարակութեան առիթով, որով Ռուսաստանին տրված են նոյն իրաւունքները դպրոցական շինութիւնների վերաբերմամբ, որպիսի իրաւունքներ նորերս ձեռք բերեց Ֆրանսիան։ Ներկայ էին Զատկի օրերի համար եկած 5000-ից աւելի ուխտաւորներ։

ԼՕՆԴՕՆ։ Սեսիլ Րօդս իր կտակի մէջ կարգադրեց թոշակաւորների մեծ թիւ պահել Օքսֆօրդի համալսարանում գաղթականութիւններից եւ Ամէրիկայից եկած ուսանողներից։ Լրացուցիչ յօդուածով հիմնում է 15 թոշակներ նոյն Օքսֆօրդում Գերմանիայից եկող ուսանողների համար, պատճառաբանելով այդ նրանով, որ բարի համաձայնութիւնը Անգլիայի, Ամէրիկայի եւ Գերմանիայի միջեւ կապահովէ համաշխարհային խաղաղութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ։ Ուսկիւբից ստացված հեռագիրը տեղեկացնում է Իպէկում տեղի ունեցած անկարգութիւնների մասին։ Արնաուտները յարձակվեցին կօնակի եւ հեռագրատան վրա, բռնեցին պաշտօնեաներին եւ Իլդիզ-Քիօսկի պալատը ուղարկած հեռագրով պահանջեցին ձերբակալված բոլոր ալբանացիների ազատութիւնը։

ԲԵԼԳՐԱԴ։ Սկուպշչինան բարձրացրեց զօրքի կազմը խաղաղութեան ժամանակ 12-ից մինչեւ 17 հազար մարդ։

ՊԱՐԻԶ։ «Revue Economique» այն միտքն է յայտնում, թէ ռուսաց փոխառութեան աջողութիւնը Գերմանիայում եւ Հօլլանդիայում ապացուցանում է, որ ռուսական կրէդիտը միմիայն զգացմունքից չէ կախված, այլ աւելի լուրջ հիմք ունի—երկրի րէսուրսների գիտակցութիւնը։—«Economiste Francais» յայտնում է, որ ռուսական փոխառութիւնը գերմանական շուկաներում ներկայացնում է մի օպէրացիա, որ նպաստաւոր է ռուսական կրէդիտի եւ ռուսաց ֆօնդերի լաւ ընթացքի համար։

ՎԻԷՆՆԱ։ «Neue Freie Presse» լրագիրը, խօսելով Կալաշինի մօտ տեղի ունեցած ընդհարման մասին, նկատում է, որ այն սահմանի վրա համարեա իւրաքանչիւր գարնան ապստամբութիւն է պատրաստվում։ Աւստրօ-Ունգարիան եւ Ռուսաստանը պատշաճաւոր ուշադրութեամբ հսկում են այդ բանի վրա, եւ երկու պետութիւններն եւս գործում են համաձայն։ Ռուսաստանի խորհրդով, Բ. Դուռը ուղարկեց օժանդակ զօրքեր՝ Սերբիայից աւազակախմբերի անցնելու առաջն առնելու համար։ Երեւի Աւստրօ-Ունգարիան խորհուրդ կը տայ սերբիական կառավարութեանը սահմանի վրա հսկելու համար։ Յոյս ունեն, որ այդպիսով ապստամբութիւնը կը ճնշվի։

24 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է կարճառօտ հաշիւ երկրաշարժից վնասված Շամախի քաղաքը եւ գիւղերը Բարձրագոյն հրամանով Ֆլիգէլ-ադիւտանտ իշխան Օբօլէնսկուն ուղարկելու մասին։—Ռուսաց Կայսերական հիւպատոսութիւնը Միլանում խնդրում է ռուսական խոշոր ֆիրմաներին, որոնք պարապում են կամ ցանկանում են պարապել կովերի եւ ձիերի չը պատրաստված կաշիների, չոր արիւնի, եւ խոզի մազի արտահանութեամբ դէպի Իտալիա, հաղորդել իրանց հասցէները եւ պայմանները իտալական գնողներին յանձնելու համար։—Մարտի 23-ին Թագաւորը, Թագաժառանգի ուղեկցութեամբ, այցելեց ինտենդանտական գլխաւոր վարչութեան տեխնիկական կօմիտէտը։—Մարտի 23-ին Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնա այցելեց Կրէստօվօզդվիժէնսկի համայնքին կից հիւանդանոցը։—Մարտի 23-ին Մեծ Իշխան Թագաժառանգը այցելեց Պրէօբրաժէնսկի գնդի հիւանդանոցը։—Մարտի 23-ին Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրօվիչի մօտ կայացաւ նախաճաշ։ Հրաւիրված էին Մարշան եւ Սօվաժ։

ԼՕՆԴՕՆ։ Բօէրների կորուստները Դրիկուիլի մօտ եղած կռւի մէջ մարտի 18-ին. 137 սպանվածներ եւ վիրաւորվածներ. անգլիացիների կորուստները Դէլարէյի հետ ունեցած կռւի մէջ. 3 օֆիցէր եւ 24 զինուորներ սպանված, 16 օֆիցէրներ եւ 131 զինուորներ վիրաւորված։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը սկսեց զետեղել Մակեդօնիայի սպառնալի կէտերում 20 եւ աւելի մարդկանցից զօրախմբեր։ Կարծում են, որ այդ միջոցը կապահովէ հանգստութիւնը։

ԲԵԼԳՐԱԴ։ Ղեկավարող շրջաններում «Neue Freie Presse» լրագրի հաղորդագրութիւնը՝ Սերբիայում իբր թէ կազմակերպված աւազակախմբերի եւ գաղտնի կերպով զէնքեր անցկացնելու մասին՝ փաստերի աղաւաղում են համարում։ Սերբիական կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք է առնում հանգստութիւնը պաշտպանելու համար սահմանների վրա եւ մեծ եռանդով հանդէս է գալիս իր հայրենակիցներին Ստարօսերբիայում անօգուտ վըտանգներին ենթարկելու փորձերի դէմ։—Թագաւորն ընդունեց ֆինանսների մինիստրի հրաժարականը։

ԱԹԷՆ։ Էդուարդ VII թագաւորի թագադրութեան ժամանակ Մէնէլիքի ներկայացուցիչը կը լինի Ռաս-Մակօնէն։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիացիները Բօշմանսկոպի մօտ եղած կռւի մէջ մարտի 18-ին կորցրին 20 մարդ սպանված եւ 56 վիրաւորված։

ՕԴԷՍՍԱ։ Պետերբուրգ ճանապարհ ընկաւ զօրքերի հրամանատար կոմս Մուսին-Պուշկին։

ԱՍԽԱԲԱԴ։ Այստեղ փակվեց 1900 թւին հիմնված Ասխաբադի գաւառի աղքատ տէկինցիներին օգնող ընկերութիւնը, որովհետեւ անդամական վճարներ չէր ստանում։

ՊԱՐԻԶ։ Ֆրանսիան սովոր է փոխառութիւնների համար եղած հրապարակական ստորագրութիւնների խոշոր թւերին, այդ պատճառով այն հանգամանքը, որ այդ ստորագրութիւնը փառաւոր հետեւանքներ տուեց, Ֆրանսիայում զարմանք չը յարուցեց, բայց այստեղ դեռ չէին տեսել այնքան հրէշաւոր թւանշան, ինչպէս այն, որը ձեւակերպում է ստորագրութեան գումարը Գերմանիայում, Հօլլանդիայում եւ Ռուսաստանում։ Ահագին աջողութիւնը բացատրվում է Ռուսաստանի կրէդիտի գերազանցութեամբ, որի իսկական դրութիւնը յայտնի է Գերմանիային եւ Հօլլանդիային։

25 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 24-ին, երեկոյեան 8 ժամին, Ստրէլնում մեռաւ Գլէբ Ուսպէնսկին։

ՊԱՐԻԶ։ Լուբէ, անցկացնելով Զատկի տօները Մօնտէլիմարում, վերադարձաւ այստեղ։ Կայարանից դուրս գալու ժամանակ նրա կառքին մօտեցաւ մի մարդ «արդարութիւն եմ պահանջում» խօսքերով եւ իսկոյն կալանաւորվեց։ Նրա մօտ գտնված է լցրած րէվօլվէր։ Դա հաշւապահ Սուրն է, որը հալածված լինելու մանիա ունի։ Նրա խօսքով, րէվօլվէրը վերցրել էր ինքն անձնապաշտպանութիւն գործելու համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Իպէկ ուղարկված է երկու բատալիօն։ Միտրօվիցում եւ Նոր-Բազարում սարսափ է տիրում։ Նոր-Բազարում գայմագամը թագնվեց միջնաբերդում։ Ապստամբները գրաւեցին հեռագրատունը եւ կօնակը։ Գեներալ-Շունսի-փաշան ճանապարհ ընկաւ Պրիշտինից հանգստութիւնը վերականգնելու համար։ Բ. Դուռը շրջաբերական է ուղարկել գործերի դրութեան մասին Մակեդօնիայում։

ԳԼԱԶԳՕ։ Գնդակ խաղալու ժամանակ պատնէշը քանդվելու միջոցին 125 մարդիկ վնասվեցին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

5 մարտի

Բօրսայի դիսկօնտը	4½—6½ ր.
Պետական 4% րենտան	— 96½ »
I Խաղար. տոմսերը	469½ — »
II » »	360 — — »
III » »	306½ — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	89¼ — »
Բագուի » » »	— — — »
Թիֆլիսի հող. բանկի 5%	— — — »
» » » 4½%	— — — »
Բագուի Նաւթ. Ընկ.	462 — — »
Կասպիական Ընկ.	5050 — »
Մանթաշեան եւ Ընկ.	222 — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

Բ. Օ. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվսկի—9—10 ժ. աչքի, ներքին և ներվային հ.

Կ. Ի. Դզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռօսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. ներվային (էլեկտրաբույժ), վեներ. և մորթու հ.

Դ. Ա. Թառխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Օ. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բըժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆ

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի, մարտի 26-ին

ԾԱՄԸԽՈՒ ԵՐԿՐԵՑԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Թատերասէրները կը ներկայացնեն

ԹՈՒՐՔԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

I

ՎԻԶԻՐ-ԽԱՆ ՍԱՐԱԲ

Կօմեդիա 4 գործող., հեղինակ. Միրզա Ֆաթալի Ախունդօվի։

II

ԿԸՌԹ-ԿԸՌԹ

Վօդ. 1 գործողութեամբ։

Սկիզբը երեկոյեան 8 ժամին։

2—2 Կարգադրող՝ Մ. Ահմէդ-Խան

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գէօդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, աստառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանօնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվօրցօվայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։

88—100

ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ

Բացված է բժշկական—հանքային եւ պտղաջրերի պահեստ՝ գործարանի գներով

Ջեմմեղի հին զավօդի

Կախէթի փողոց, խանութ Տէր-Կարապետեանի, փոխատու դրամարկղի (сберегательная касса) հանդէպ։ 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտւութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաթնային քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագւում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պօպօվի եւ Արիստակօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 67—100

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՎԷՐԷԻՉԵՎ ԵՒ ԿԱՄԷՆՄԱԽԷՐ“

որ իր տպարանական աշխատանքների համար Բաթումում արժանացել 1901 թւականի Կովկ սեան յօբելեանական ցուցահանդէսի մէդալին, եւ «Тифлиескій Листокъ» լրագրի գովասան կան կարծիքին (№ 277 1901 թւականի) յայտնում է, որ բացել է Թիֆլիսում, Միխայլովսկայ եւ Նէմեցկայա փողոցների անկիւնում, Սլիվիցկու տանը

ՏՊԱՐԱՆ ԵՒ ՏՈՂԱՐԱՆ

որոնք կազմակերպված լինելով տեխնիկայի վերջին պահանջների համեմատ, հնարաւորութի կունենան կատարել ամեն տեսակ տպարանական եւ տողային աշխատանքներ բոլոր եւրոպակ եւ տեղական լեզուներով

ԳԵՂԵՑԻԿ, ՇՈՒՏ ԵՒ ԷԺԱՆ

Տպարանի գրասենեակը բաց է մարտի 23-ից ամենայն օր։ Որպէս զի պատուէր տուողները զատվեն իզուր ժամանակ կորցնելուց՝ տպարան այցելելու համար, «Վէրէիչեվ եւ Կամէնմա խէր» ընկերութիւնը ունի մի խումբ ծառայողներ, որոնք կարող են գալ պատուէր տուողնե տները՝ պատուէրներ ընդունելու համար։ 1—10

Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեա Աշխատանքի Տունը

իր պահեստում ծախու ունի հետեւեալ իրեղէնները եւ առարկաները.

1) Զանազան տեսակ զգեստներ եւ սպիտակեղէններ. 2) Տեղաշոր. 3) Ուլկաններ. Ձեռոցաններ. 5) Թղթէ տոպրակներ. 6) Ամեն տեսակ կարտոնի արկղիկներ. 7) Բռնոցներ (ру ки для пакетовъ). 8) Պակլեա գործարանների եւ չոգենաւերի համար։

Նոյն տեղն ընդունվում են եւ պատուէրներ։ Պատուէրները կատարվում են արագ, ամ նայն ճշդութեամբ եւ շատ չափաւոր գներով։ Ընդունվում են նաեւ կազմարարութեան պատուէրներ։

Հասցէն՝ Баку, Верхне-Григоріевская ул., д. Шредера, близъ пожарной команд телефонъ № 713. 3—5

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

վաճառվում են՝

ՓԱՆԵԱՆՑ ԽԱԶ. ՔԱՀ., Բորեպաշտները (արեւելեան զրոյց), Թիֆլ. 1901 թ. գ. 10 կ.
» Թարգմ., Ցուղայի վերջին գիշերը, Թիֆլ. 1901 թ. գ. 5 կ.
» Փաքիօլա, Թիֆլ. 1901 թ. գ. 15 կ.
ВЕСЕЛОВСКІЙ ЮРІИ, Армянскій поэтъ Смбать Шахъ-Азизъ, критическій этюд Москва, 1902 г., ц. 1 р.
ՑԱՐԻՑ Ն., Նկարներ (ծաղկաքաղ իմ նամակներից), գ. 50 կ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ ԳԷՈՐԳ, Բանաստեղծութիւններ, գ. 1 ր.
ՐԱՖՖԻ, Վէպիկներ եւ պատկերներ 2 հատոր—4 ր., Կայծեր ա. հատ.—2 ր., Ջահրումար- ր., Տաճկահայք—50 կ., Մինն այսպէս—միւսն այնպէս—պատկերազարդ—1 ր. եւ Կայէնի կա կը—1 ր. 20 կ.։

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю. (Ե) 4—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

XVIII ԴԱՐ

Առաջին մաս

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊԷԿ

Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը ։Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшакъ. «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակնե րը։ Գինը 1 րուբլի 50 կօպէկ։

Թիֆլիսի Քաղաքային Կրեդիտային Ընկերութեան Վարչութիւնը

սրանով տեղեկութիւն է տալիս իր անդամ—պարտապաններին, որ կանոնադրութեան 71-րդ յօդուածի զօրութեամբ նրանց տուած եռամսեայ արտօնութիւնը՝ ժամանակամիջոց ունեցող վճարների համար՝ լրանում է այս տարվայ ապրիլի 1-ին եւ որ մինչեւ ապրիլի 10-ը բոլոր ապառիկների չը վճարելու դէպքում, անճշդապահ պարտապանների կալուածքները, նոյն կանոնադրութեան 72-րդ յօդուածի համաձայն, կը յայտարարվեն, որպէս հրապարակով ծախվող կալուածքներ։ 3—3

ՍՏԱՑԵԼ ԵՆՔ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԵՒ ԱՄԱՌԱՅԻՆ ՍԵԶՕՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

տղամարդկանց, կանանց եւ երեխաների

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Ընդունում ենք, մեր կտորներից, ամենայն տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ (ЗАКАЗЫ), որոնք ըստացված են արտասահմանեան և ռուսական ամենայայտնի գործարաններից։

Մագազինին կից բացել ենք նոր բաժա մունք, բացառապէս կանանց վերնազգեստների համար, կարված ամենավերջին տարազով։

ԳՆԵՐԸ ԱՄԵՆՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Դիմել՝ եղբ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ

Գօլօվինսկի պրօսպէկտ, տուն Քաչվէթեան ս. Գէորգ եկեղեցու, առաջին գիմնազիայի հանդէպ։ 7—20

Дозволено Цензурою, Тифлисъ, 25 Марта 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.